ՆՍՏԱՇՐՋԱՆ՝ ՆՎԻՐՎԱԾ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՀՈՎՍԵՓ ՕՐԲԵԼՈՒ ԾՆՆԴՅԱՆ 110-ԱՄՅԱԿԻՆ

1997 թ. ապրիլի 10-ին ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի նիստերի դահլիճում տեղի ունեցավ ինստիտուտի գիտական նստաշրջան՝ նվիրված Հովսեփ Օրբելու ծննդյան 110-ամյակին։ Նստաշրջանին ներկա էին ՀՀ ԳԱԱ Նախագահության անդամներ, Արևելագիտության, Հնագիտության և ազգագրության ինստիտուտների ու Հայաստանի պատմության պետական թանգարանի մի շարք աշխատակիցներ։

Բացելով նստաշրջանը, Պատմության ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Հրանտ Ավետիսյանը նշեց, որ 1944 թ. ապրիլի 10-ին ՀԳԱ պրեզիդենտ Հովսեփ Օրբելին հրավիրեց մեր նորաստեղծ ակադեմիայի առաջին գիտական նստաշրջանը, որ նվիրված էր Հին Հայաստանի պատմությանն ու մշակույթին։ Խորհրդանշական է, ասաց Հ. Ավետիսյանը, որ այսօր, այս նույն ապրիլյան օրը, ակադեմիայի Պատմության ինստիտուտում սկսում ենք գիտական նստաշրջան՝ նույն թեմատիկայով և նույն հիմնախնդիրների շուրջ։

Անդրադառնալով գիտությանն ու քաղաքակրթությանը երեք մեծություն պարգևած Օրբելի գերդաստանի պատմությանը, նա նշեց եղբայրներից յուրաքանչյուրի խոշոր գիտնական, գիտության կազմակերպիչ և նորի հիմնադիր լինելն իրենց բնագավառներում։ Ավագը՝ Ռուբեն Օրբելին, ստորջրյա հնագիտության հիմնադիրն էր, Լևոն Օրբելին՝ Պավլովի աշակերտն ու մերձավոր գործընկերն էր, սկզբնավորողը ֆիզիոլոգիայի մի շարք ուղղությունների։ Իսկ Հովսեփ Օրբելին դարձավ հայրենական արևելագիտության, կովկասագիտության և, մասնավորապես, հայագիտության ականավոր դեմքերից մեկը, գիտության փայլուն կազմակերպիչ, որը, ակադ. Տարլեի բնորոշմամբ, ամենանշանավոր գիտնականներից է, որ հայ ժողովուրդը տվել է աշխարհին։

Մենք հիշում ենք, ասաց Հ. Ավետիսյանը, Օրբելու բոցաշունչ ելույթները ռազմաճակատներում, պաշարված Լենինգրադից նրա ռադիոելույթները, որոնք ի մարտ էին մղում հայրենիքի պաշտպաններին և, հատկապես, նրա մեղադրաճառը Նյուրնբերգյան դատավարության ժամանակ։

Իր ուսուցչի մասին հետաքրքիր հուշեր պատմեց ակադ. Հ. Բարթիկյանը։ 1954 թվականից աշակերտելով Հովսեփ Օրբելուն, նա շատ տարիներ է ունեցել շփվելու պատմարանների և մշակութարանների մի ողջ սերունդ պատրաստած մեծ գիտնականի հետ։ Հ. Օրբելու կյանքի և գործունեության դրվագները, նշեց Հ. Բարթիկյանը, լավագույնս և դիպուկ բնութագրում են նրան որպես քաղաքացու և հայրենասերի, գիտության գործչի և մանկավարժի։

Հ. Օրբելու երկերում հայ հոգևոր մշակույթի մեկնաբանությանն էր նվիրված պատմ. գիտ. դոկտոր Է. Դանիելյանի զեկուցումը։ Հայոց պատմությունը հոգևոր ամբողջականության մեջ ընկալելու պատմագիտական մոտեցումը մշակել էր դեռևս Մովսես Խորենացին՝ հայ ժողովրդի պատմության նախաքրիստոնեական և քրիստոնեական ժամանակաշրջանները ներկայացնելով ավանդական, շարունակական կապի մեջ։ Նմանապես և Օրբելին է մոտեցել մեր պատմական իրողություններին, նշեց զեկուցողը, հազարամյակների խորությամբ բնութագրվող «Սասնա Ծռեր» դյուցազնավիպական ակունքներից մինչև եղիշե, ժողովրդական բանահյուսությունից մինչև Մխիթար Գոշ և Վարդան Այգեկցի, անտիկ վիմագրությունից մինչև Աղթամարի ու Անիի տաճարներն ու բարձրաքանդակները։ Գիտնականը մեծ տեղ էր տալիս յուրաքանչյուր ժողովրդի՝ ավանդական ուղիներով զարգացմանը, ինչով և պայմանավորված էր համարում համամարդկային արժեքների լույս աշխարհ գալը։

Գիտնականի համար կարևոր է եղել նաև հետազոտվող հուշարձանի հոգևոր ինքնության բնութագրումը և բացահայտումը, որն անքակտելի մասն է Օրբելու իրականացրած՝ հայոց մշակույթի հիմնարար ուսումնասիրության, նշեց զեկուցողը։ Մեծանուն գիտնականի հավատամքն էր ազգային իմաստնությունը և հանճարը, բայց ոչ թե ինքնանպատակ, այլ որպես հոգևոր կատարելություն, որ ներառնում է հին հեթանոսական (ազգային) և քրիստոնեական աղդապահպան հոգեընկալումներ, որոնցով իսկ կամրջվում են նաև համամարդկային եզրերը, ընդգծեց Է. Դանիելյանը։

«Սասունցի Դավիթ» էպոսի պատմական ակունքներին էր առնչվում պատմ. գիտ. թեկնածու Վ. Խաչատրյանի զեկուցումը։ Նա նշեց, որ չնայած էպոսը վերջնականորեն ձևավորվել

է IX—XII դդ. և արդյունք է արաբական տիրապետության դեմ հայ ժողովրդի մղած պայքարի, բայց մի շարք դիտնականների, այդ թվում և Հ. Օրբելու կարծիքով, պարունակում է ավելի հին ժամանակներին վերաբերող տեղեկություններ։ Սասնա հերոսները կռվում էին ոչ թե արար նվաճողների, այլ մ.թ.ա. VII դարում Վան ներթափանցած օտար, ուրարտական արքայատոհմի իշխանության դեմ։ Եվ որ Մսրը ոչ թե XI—XII դարերի Եգիպտոսն էր, այլ մ. թ. ա. VII դարի Ուրարտուն, քանի որ Մսրա Մելիքը Սասունի վրա էր հարձակվում Մուշի կողմից։ IX—XII դդ. էպոսը փոխակերպվել է, ասացողները փոխել են երկրների և գործող անձանց անունները, որով և առաջացել են մի շարք հակասություններ։ Նա կարծում է, որ Մեծ Մհերը հայոց առաջնորդ Սկայորգին է, Դավիթը՝ Պարույր Սկայորդին, իսկ Փոքր Մհերը՝ Երվանդ Սակավակյացը։ Զեկուցումը հարուցեց աշխույժ քննարկումներ։

«Ժայռապատկերը որպես պատմության սկզբնաղբյուր» թեմայով ելույթ ունեցավ ինստիտուտի կրտսեր գիտաշխատող Կ. Թոխաթյանը։ Նա նշեց, որ ժայռապատկերաբանությունը մ.թ.ա. VI—I հազարամյակների պատմական իրականության բացահայտմանը հուսալիորեն կծառայի միայն այն դեպքում, եթե ժայռապատկերները ճիշտ արժեքավորվեն, դասակարգվեն և համակարգվեն։

Հայաստանի ժայռապատկերների մեծ քանակությունը (տասնյակ հազարներ) և դրանց թեմատիկայի ու տեսականու հարստությունն արդյունք են մեր նախնյաց նպատակային գործունեության այս՝ ժայռափորագրման ոլորտի հանդեպ որոշակիորեն հատուկ և ակնածալի վերաբերմունքի, ինչը և կարող է փաստել այս սկզբնաղբյուրների հավաստիությունը։ Ըստ Կ. Թոխաթյանի, դա են վկայում մի շարք հնագիտական և դիտողական փաստեր. քարաթեկորներն ու դրանց մակերեսներն ընտրովի են, խմբերում հազվագյուտ են անավարտ պատկերներն ու չնկարազարդված քարերը և զգացվում է մեկ ձեռքի աշխատանքը՝ փորագրողի մասնագիտացված լինելը։ Զեկուցողն առաջարկեց հավաստիության մեկ այլ հնարավոր փաստարկ. եթե դասակարգման շնորհիվ պարզվի, որ ժայռապատկերները կազմում են իրականության արտացոլման ամբողջական համակարգ, ապա, ըստ ինֆորմատիկայի օրենքների և գիտական դիտելիքի օբյեկտիվության չափանիշների՝ ժայռապատկերներում պարունակվող և մեր ընկալած դիտելիքը կլինի ճշգրիտ և հավաստի։

Ժայռափորագրման ու քարեգործության այլ ոլորտների (ժայռանկար, արձանագործություն, ճարտարապետություն) շարունակականությունը և տարբեր դարաշրջանների ստեղծագործության տեխնիկաարվեստաբանական ընդհանրությունները միասին վերցրած կարող են ես մեկ անգամ վկայել դրանք ստեղծած ժողովրդի բնիկ լինելը, ընդգծեց զեկուցողը։

Հ. Օրբելու գիտական ժառանգության մեջ հայոց հեթանոսության արտացոլման լուսաբանմանն էր նվիրված պատմ. գիտ. թեկնածու Գ. Վարդումյանի ելույթը։ Հետաքրքրություններ լայն շրջանակի տեր գիտնականը, բնականաբար, զբաղվել է նաև հին հավատքի, պաշտամունքի, առասպելաբանության և դիցաբանի խնդիրներով։ Քննելով Աղթամարի տաճարի բարձրաքանդակներից երեքը, իբրև առասպելական կերպարներ, Հ. Օրբելին դրանց ակունքներն աղերսում է հեթանոսությանը, ասաց զեկուցողը։ Հայոց դիցարանի մի շարք աստվածների՝ Անահիտ, Աստղիկ, Վահագն, Արամազդ, Միհր, Օրբելին անդրադառնում է թեև թռուցիկ, սակայն իրեն շատ բնորոշ խորությամբ։

Հեթանոսության վերաբերյալ բարձրարժեք նյութ է պարունակում նաև «Սասունցի Դավիթ» էպոսի նախաբանը, նշեց Գ. Վարդումյանը, որտեղ Հ. Օրբելին գրում է. «Հին հայերի կոսմիկական հնագույն պատկերացումները, հնադարյան առասպելները, որոնք ստեղծվել են Հայաստանի նախապատմական կյանքի հազարամյակների ընթացքում, և ականատեսների ու նրանց հետնորդների հիշողության մեջ դրոշմված պատմական իրադարձությունները միաձուլվել, մի միասնական ամբողջություն են կազմել, երանգավորված պատմականության արտաքին երևույթով։ Իսկ տարբեր ժողովուրդների դյուցազներգություններ, ասքերի, պատումների նմանությունները նա բացատրում է մարդկային մտածողության ընդհանրությամբ, աշխարհաճանաչողության և ինքնարտահայտման ձևերի, արտահայտչամիջոցների նմանությամբ ողջ մարդկության պատմության մեջ։ Զեկուցողն ընդգծեց, որ Հ. Օրբելու ուսումնասիրությունները հայագիտության զարգացման մի ամբողջ փուլ են արտացոլում և արժեքավոր են մինչև օրս։

Հայաստանում բդեշխությունների առաջացման հարցերին էր նվիրված պատմ. գիտ. դոկտոր Ս. Կրկյաշարյանի զեկուցումը։ Ներկայացնելով «բդեշխ» պաշտոնի և բառերի ծագման պատմությունը, պայմաններն ու ժամանակը, նա հանդամանալիորեն անդրադարձավ առկա բոլոր բացատրություններին, նշելով դրանց թերի և դեմ կողմերը։ Բդեշխության ինստիտուտը հատուկ է եղել Իրանին, Իբերիային և Հայաստանին։ Ս. Կրկյաշարյանի համոզմամբ, այն առաջացել է Տիգրան Մեծի ժամանակ, քանզի

մինչև վերջինիս գահակալումը, հայոց թագավորության սահմանները նպաստավոր չէին բդեշխությունների ձևավորման համար։ Հպատակվելով նոր աշխարհակալին, միակցված երկրների տիրակալները դառնում էին հայոց թագավորի հպատակ զինակիցները։ Իսկ Տիգրան Մեծն այս պայմաններում ընդունում է «արքայից արքա» տիտղոսը, նշեց զեկուցողը։ Հետագայում, երբ հայերը կորցրին Տիգրանի նվաճած երկրամասերը, բդեշխներն աստիճանաբար վերածվեցին կուսակալ-կողմնակիցների, որն էլ արձանագրել են V դարի մեր մատենագիրները, որոնք բդեշխներին գիտեն որպես «գահերէց» և «բարձերէց» իշխանների, նշեց զեկուցողը, և որ այս բառերի միջոցով բնորոշվում է բդեշխների սոցիալական գիրքն Արշակունյաց Հայաստանում։ Բդեշխի պաշտոնը, որն ի սկզբանե ժառանգական չէր, այլ որոշակի ծառայությունների դիմաց շնորհվի, ավատատիրության արմատավորմանը զուգընթաց դառնում է ժառանգական, ինչն էլ հիշատակված է հայ անդրանիկ մատենագիրների երկերում, ամփոփեց Ս. Կրկյաշարյանը։

Հայաստանի պատմության պետական թանգարանում պահվող մի բարձրաքանդակի արվեստաբանական վերլուծությանն ու ժամանակագրմանն էր առնչվում ինստիտուտի կրտսեր գիտաշխատող Հ. Մարգարյանի զեկուցումը, որ վերնագրված էր «Հայաստանի հելլենիզմի ևս մեկ հուշարձան»։ Տեղական գորշ տուֆե բարձրաքանդակի բեկորը գտնվել է Գեղարքունիքի մարզի Զոդ գյուղում, 1980 թ., և ցավոք՝ առանց ուղեկցող հնագիտական նյութի, ասաց զեկուցողը։ Այն պատկերում է նստած տղամարդ, հավանաբար՝ խնջույքի պահին և պարող մերկ կին։ Ցուցադրելով գտածոյի լուսանկարները, Հ. Մարգարյանն այն համադրեց արինբերգյան պայակի բարձրաքանդակների հետ և ըստ տղամարդու պատկերի վերլուծության, եզրակացրեց, որ պատկերված է դիոնիսյան խնջույքի տեսարան։ Շարունակելով համադրությունը, այս անգամ միջագետքյան նյութի հետ, զեկուցողը ցույց տվեց, որ կնոջ պատկերի կատարման գեղարվեստական առանցքը մոտ է պարթևական հելլենիստական քանդակագործությանը։ Հաշվի առնելով Հայաստանի և Պարթևստանի քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային սերտ կապերը, հուշարձանը կարելի է թվագրել մ.թ.ա. II—I դարերով և վերագրել այն պարթևա-հելլենիստական արվեստի ազդեցությամբ ստեղծվածների թվին, եզրափակեց զեկուցողը։

«Հայոց դարձի թվականի ճշգրտումը» թեմայով ելույթ ունեցավ պատմ. գիտ. դոկտոր Ռ. Մաթևոսյանը։ Հայ պատմաբանասիրությունը, Մ. Չամչյանից մինչև 20-րդ դարի կեսերը, քրիստոնեության ընդունման տարեթիվը համարել է 301—303-ը։ Առաջարկվել են նաև այլ, ավելի վաղ տարեթվեր՝ 276, 285—303, 279 և այլն, նշեց զեկուցողը։ Այնուհետև Հ. Մանանդյանն առաջարկել է նոր վարկած՝ շրջանառության մեջ գնելով 313 թ. Միլանի հրովարտակը (էդիկտը), համաձայն որի, Բյուզանդիայում մինչ այդ հետապնդվող քրիստոնեությունը հայտարարվեց ազատ և թույլատրելի (բայց ոչ պետական) կրոն։ Ուստի և Հայաստանը, որ սերտ կապեր ուներ Հռոմեական կայսրության հետ, ավելի շուտ չէր կարող ընդունած լինել նոր կրոնը, ըստ այդ վարկածի, ասաց Ռ. Մաթևոսյանը։ Սակայն գիտնականների մի մասը համամիտ չէ այս տեսակետին, քանզի գտնում են, որ Միլանի էդիկտ չի էլ եղել։ Զեկուցողը նույնպես համաձայն է դրան, և, միաժամանակ, առաջարկում է աչքաթող չանել Ն. Ադոնցի մի շատ կարևոր դիտողությունն այս առթիվ. 296 թ. Գրիգոր Լուսավորիչը կարող էր ձեռնադրվել թեկուզ Սեբաստիայում, և եթե նա, այնուամենայնիվ մեկնեց Կեսարիա, ապա, պետք է ընդունել, որ ձեռնադրումը տեղի է ունեցել մինչև 296 թ.։ Ուստի, զեկուցողի համոզմամբ, 313 թվականը պատմական հիմնավորում չունի և ոչ մի պատճառ չկա մերժելու ավանդական 301 թվականը։

Շահապիվանի ժողովին էր վերաբերում պատմ. գիտ. դոկտոր Վ. Վարդանյանի ելույթը։ 447 թ. հայոց 2-րդ եկեղեցաժողովը զարտկաղմիկ ուղենիշ էր երկրի համազգային բարեբնորոգչական, իրավաքաղաքական կյանքում, նրա որոշումները լոկ կանոնական չէին, այլ ծայրահեղ պատիժներ սահմանելու առումով ստանում էին դատաստանագրքի, պետական վճիռների բնույթ։ Պատժելու իրավունքը, որ պետությանն էր վերապահված, գարձավ եկեղեցու գործառույթ՝ շեշտվեց պետական-քաղաքական ոլորտում նրա բացառիկ գերը, նշեց զեկուցողը։ Ժողովի հրավիրման նախաձեռնողներ էին Հովսեփ Վայոցձորեցի կաթողիկոսը և սպարապետ Վարդան Մամիկոնյանը, ընդգծեց զեկուցողը։ Շահապիվանի ժողովի որոշումներն ուղղված էին Հայաստանում գլուխ բարձրացրած հեթանոսության դեմ, որը սպառնում էր դառնալ Սասանյանների ոչ միայն հոգևոր, այլև քաղաքական հենարանը և այդպիսով խարխլել Հայոց եկեղեցու հիմքերը, հող նախապատրաստել ժողովրդին գավանափոխելու համար։ Ժողովը, ըստ էության, ամրապնդեց Հայաստանի հոգևոր-քաղաքական ինքնությունն ու քրիստոնեական հավատը, ասաց Վ. Վարդանյանը։

Արամեացիների առաջացման և տարածման հարցերին էր առնչվում պատմ. գիտ.

թեկնածու Հ. Ավետիսյանի զեկուցումը։ Արևմտասեմական այս քոչվոր ցեղերը հայտնի են դառնում մ.թ.ա. XV դ. կեսերին, Արաբական թերակղզու Դիլմուն քաղաքում, ախլամեացիներ, իսկ հետո՝ արամեացիներ անվամբ։ Դարի վերջում նրանք բնակություն են հաստատում Սիրիայի և Միջագետքի հյուսիսային մասերում և հետագայում, զանգվածներով շարժվում դեպի Հայկական լեռնաշխարհի հարավ, նշեց զեկուցողը։ Հետազոտողների կարծիքով, նրանց տարածումը մեր լեռնաշխարհում և արամեներեն ու հայերեն լեզուների փոխազդեցությունը տեղի է ունեցել մ.թ.ա. VI—III դդ.։ Սակայն Հայկական լեռնաշխարհում արամեացիների տարածման մասին տեղեկություններ կան ասորական արքաների տարեգրություններում (Աշշուր-բել-կալա, Սարգոն II), նշեց Հ. Ավետիսյանը։ Դրանց հիման վրա նա փորձեց ցույց տալ, որ դեռևս մ.թ.ա. XV դ. վերջում արամեացիները բնակություն են հաստատում Հյուսիսային Միջագետքում՝ մեր լեռնաշխարհի հարևանությամբ, իսկ մ.թ.ա. XII դ. սկզբին խաղաղ ճանապարհով տարածվում բուն Հայկական լեռնաշխարհի հարավային որոշ մասերում։ Զեկուցումն առաջացրեց լուրջ ու երկարատև քննարկումներ։

Կ. Ս. ԹՈԽԱԹՅԱՆ